RIGHT SIDE

HUMAN RIGHTS DEFENDER NGO

Ամսագիր
Օգոստոս-
Սեպտեմբեր-
Հոկտեմբեր 2019

N10

Լիլիթ Մարտիրոսյանը մասնակցել է ILGA-Europe-ի տարեկան ժողովին

2019 թ.հոկտեմբերի 23-26-ը Չեխիայի մայրաքաղաք Պրահայում տեղի ունեցավ ILGA-Europe-ի (European region of the International Lesbian, Gay, Bisexual, Trans and Intersex Association) տարեկան ժողովը, որին մասնակցում էր նաև «Իրավունքի Կողմ» Իրավապաշտպան ՀԿ հիմնադիր նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը:
Աշխատաժողովի ընթացքում Լիլիթ Մարտիրոսյանը մասնակցել է մի քանի հանդիպումների ու քննարկումների՝ Կենտրոնական Ասիայի և Արևելյան Եվրոպայի ԼԳԲՏԻ համայնքի իրավիճակի վերաբերյալ:
Տիկին Մարտիրոսյանը մի քանի այլ խոսնակների հետ վարել է իրավապաշտպանների անվտանգության թեմայով քննարկում: Քննարկման ընթացքում ցուցադրվել է Լիլիթ Մարտիրոսյանի ԱԺ ելույթի տեսագրությունը, որն էլ մեծ արձագանքի է արժանացել. մասնակիցները մասնավորապես հետաքրքրված էին ստեղծված իրավիճակի շուրջ պետական մարմինների արձագանքով և Լիլիթ Մարտիրոսյանի անվտանգությամբ: Լիլիթը պատմել է, որ իր ԱԺ ելույթից հետո ազգայանակնների և այլ տրանսֆոբ խմբավորումների ցույցերի, առցանց հարթակում ատելության կոչերի ու մահվան սպառնալիքների հետևանքով, ընտանիքի և աշխատակիցների հետ ստիպվածվ է եղել ժամանակավորապես լքել երկիրը: Այնուհետ քննարկման մասնակիցներն իրենց երախտիքի խոսքն են հայտնել Լիլիթ Մարտիրոսյանին կատարած ահռելի աշխատանքի համար և քաջալերել են շարունակել գործունեությունն ու չընկրկել ոչ մի խոչընդոտի առջև:

Լիլիթը կիսվել է «Իրավունքի Կողմ» Իրավապաշտպան ՀԿ-ի փորձով, թե ինչպես մոբիլիզացնել մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները՝ ՀԿ-ի և իրավապաշտպան անհատի անվտանգությունն ապահովելու համար: Լիլիթը կարևորել է անվտանգության քաղաքականություններ ունենալը, որպես կարևորագույն հանգամանք իրավապաշտպանների գործունեության արդյունքում առաջացած ռիսկերն ու վտանգները նվազեցնելու համար:

Մեկ այլ հանդիպում նվիրված էր ԼԳԲՏԻ համայնքի նկատմամբ ատելության և բռնության հաղորդման, դեպքերի հավաքագրման և մշտադիտարկման մեթոդների վերաբերյալ քննարկմանը, որի ժամանակ բարձրացվել է ԼԳԲՏԻ համայնքի նկատմամբ ատելության նվազեցման վերաբերյալ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի քաղաքացիական հասարակության փորձը, ներառյալ համայնքային և միջոլորտային գործընկերությունների ձևավորումը: Այս քննարկումը դրական է անդրադառնալու նաև տարածաշրջանային նախաձեռնությունների («Տրանսգենդեր անձանց սպանության մշտադիտարկում», «ՊրոՏրանս», «ՅՈՒՆԻՖՈՐՄ», «Անվանի՛ր դա ատելություն») զարգացման վրա:

Լիլիթ Մարտիրոսյանը ILGA-Europe-ի տարեկան ժողովից վերադարձել է նոր գաղափարներով և նոր ծանոթություններով, որոնք անչափ կարևոր են «Իրավունքի Կողմ» Իրավապաշտպան ՀԿ-ի գործունեության և Հայաստանում Տրանսգենդեր համայնքի իրավապաշտպանության հետագա զարգացման համար:

STRONGER
ILGA
EUROPE

Lilit Martirosyan, first trans woman to speak from Armenian Parliament [english captions]

ILGA
EUROPE
PRAGUE 2019
#IEPRAGUE2019

HAPPY

Քարոզարշավների կազմակերպման աշխատաժողով

2019թ.-ի հոկտեմբերի 4-6-ը տեղի ունեցավ «Ինչպես կազմակերպել մշակութային և իրավապաշտպան քարոզարշավներ» աշխատաժողովը, որը կազմակերպվել էր «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի կողմից Տեղական նախաձեռնությունների կանադական հիմնադրամի (CFLI)-ի ֆինանսավորմամբ: Աշխատաժողովը նախատեսված էր բոլոր այն կամավոր ակտիվիստների համար, ովքեր ցանկություն ունեին աջակցելու մշակութային և իրավապաշտպան միջոցառումների կազմակերպմանը հանուն հավասարության:

Առաջին աշխատանքային օրը մասնակիցները ծանոթացան միմյանց հետ, կիսվեցին գաղափարներով, ակնկալիքներով և մտավախություններով:

ՀԿ նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը ներկայացրեց առաջիկա երեք օրերի թեմաներն ու աշխատանքները և մասնակիցներին մաղթեց արդյունավետ աշխատանքային օր: Դասընթացավարները բացատրեցին քարոզարշավներ կազմակերպելու կարևորությունը, ինչպես նաև հասարակություն-անհատ փոխկապակցվածության, պետության դերի և կառավարման մեթոդների վերաբերյալ, ներկայացվեց թիմային աշխատնքի կարևորությունը: Մասնակիցներից ձևավորվեց պլանավորված քարոզարշավների կազմակերպման թիմ: Բոլոր մասնակիցները մեծ ոգևորությամբ մասնակցեցին աշխատանքներին և քննարկումներին:

Երկրորդ աշխատանքային օրը մասնակիցները բաժանվեցին աշխատանքային խմբերի, քննարկեցին ինչպես ներգրավել մշակութային գործիչներին, ձեռներեցներին և քաղաքական գործիչներին հանուն հավասարության և մշակութային բազմազանությանը միտված միջոցառումներին, առանձնանցրեցին հիմնական թիրախներ ու լսարանը, ում հետ կուզեին աշխատել առաջիկա միջոցառումների ժամանակ և ներգրավել նրանց ՀԿ աշխատանքներում: Կարևորելով սոցիալական մեդիան, որպես հավասարության քարոզարշավի հիմնական տեղեկատվական գործիք՝ հրավիրված մասնագետը մանրամասնորեն ներկայացրեց սոցիալական ցանցերի կառավարման մեթոդները և ինչպես ճշգրտորեն վերլուծել սոցիալական ցացների վիճակագրությունները քարոզարշավներն առավել թիրախային դարձնելու համար: Ապա խմբային աշախտանքերի արդյունքում մասնակինցերը ներկայացրեցին սոցիալական մեդիաներում քարոզարաշվների բովանդակային պլան: Աշխատաժողովի վերջին օրը մասնակիցները և դասընթացավարները քննարկեցին՝ ինչպես կիրառել ունեցած ռեսուրսներն ու դերաբաշխել ներգրավված անձանց առավել արդյունավետ աշխատանք ունենալու նպատակով: Աշախատաժողովը շարունակվեց տարբեր քննարկումներով, իրականցվեցին ՍՎՈԹ և ՓԵՍԹ վերլուծություններ հասկանալու համար միջոցառման կազմակերպման ուժեղ ու թույլ կողմերը, հնարավորություններն ու ռիսկերը:
Աշխատաժողովի ավարտին ՀԿ նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը շնորհակալություն հայտնեց մասնակիցներին իրենց ժամանակն ու ռեսուրսները տրամադրելու և ներկա գտնվելու համար ապա հանձնեց մասնակցության վկայականները:

ԻԿՀԿ թիմն իր երախտագիտությունն է հայտնում աշխատաժողովի աջակիցներին ու մասնակիցներին և հույս է հայտնում, որ նմանօրինակ միջոցառումները կկրեն շարունակական բնույթ և մասնակիցները ակտիվորեն ներգրավված կլինեն ԻԿՀԿ աշխատանքներում:

ՀՀ ԱՆ ՄԻ պաշտպանության ռազմավարության մշակման հանդիպում

Սույն թվականի սեպտեմբերի 13-ին և 18-ին Իրավունքի Կողմ Իրավապաշտպան ՀԿ նախագա՝ Լիլիթ Մարտիրոսյանը և ծրագրերի ղեկավար՝ Ա. Գևորգյանը մասնակցեցին ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՔՆՆԱՐԿՈՒՄԱՆԸ:

Առաջի օրվա քննարկումը ուղղված էր օրենքի առջև հավասարության ապահովման, խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության (երեխաների իրավունքներ, կանանց իրավունքներ, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ և այլն) բնագավառներում առկա իրավիճակի վերլուծությանը, խնդիրների քարտեզագրմանը:

Երկրորդ օրվա քննարկումը ուղղված էր սոցիալական, կրթական, աշխատանքային իրավունքների, առողջության պահպանման, շրջակա միջավայրի պաշտպանության, տնտեսության և տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառներում առկա իրավիճակի վերլուծությանը, խնդիրների քարտեզագրմանը:

Առաջին և երկրորդ օրերի ընթացքում Լիլիթ Մարտիրոսյանը և Ա. Գևորգյանը ներկայացրեցին Տրանսգերնդեր անձանց խնդիրները տարբեր բնագավառներում, մասնավորապես կրթական ոլորտում, առողջապահության ոլորտում, սոցիալական ոլորտում և այլ ոլորտներում:Իրավունքի Կողմ Իրավապաշտպան ՀԿ-ն շնորհակալություն է հայտնում Արդարադատության նախարարությանը նմանատիպ հանդիպումներ կազմակերպելու և լսելի դարձնելու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ձայնը:

#ՄԻԱՅՆՍԵՐ

#ՄԻԱՅՆՍԵՐ արշավը նախատեսված է լուսաբանելու մշակութային գործիչների մտքեր կամ գործունեություններ որտեղ նշմարվում է քուիր արվեստն իր ողջ գեղեցկությամբ:



«Արվեստագետը երգիչն է կյանքի...Իսկ կյանքը հերքում է չարը: Նկարչի պարտքն է քարոզել Սեր բնության, ՄԱՐԴՈՒ և աշխատանքի հանդեպ»:
Մարտիրոս Սարյան

Հիմա, լսիր, սկսում եմ իմ ինտիմՊոեմն անհուն, և մեղսական, և թովիչ...
Եղիշե Չարենց

Տրանս կնոջ փաստաբանը՝ դատական խոչընդոտների մասին

2019թ.-ի ապրիլի 5-ին ՀՀ Ազգային Ժողովում տրանսգենդեր կնոջ ելույթից հետո հանրության արձագանքը երկար սպասեցնել չտվեց, ինչպես կանխատեսված էր այն մեծամասամբ բացասական բնույթ էր կրում, սակայն եղան դեպքեր, երբ հասարակության որոշ ներկայացուցիչների հանդգնությունն անցավ բոլոր կանխատեսելի և անկանխատեսելի սահմանները:

«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը մի քանի անգամ ստիպված եղավ դիմելու իրավապահ մարմիններին սպառնալիքներից, մահվան կոչերից, հետապնդումներից խուսափելու և անձնական տեղեկատվությանն հրապակայնությունը կանխելու նպատակով: Այս ու այլ իրավական միջամտությունների վերաբերյալ և դրանց ժամանակ ծագած խնդիրների մասին խոսեցինք փաստաբան Արթուր Մարգարյանի հետ, ով հանդիսանում է Լիլիթ Մարտիրոսյանի ներկայացուցիչը մի շարք դատական գործերի շրջանակներում:

Այս կապակցությամբ մենք մի քանի հարց ուղղեցինք այս գործերում ներգրավված փաստաբան Արթուր Մարգարյանին:

Հարցազրույց

Պարոն Մարգարյան կասե՞ք՝ Խորհրդարանում Լիլիթ Մարտիրոսյանի ելույթից հետո սպառնալիքների հիմքով եղե՞լ է արդյոք հաղորդում ոստիկանություն և եթե այո, ապա քանի՞ այդպիսի հաղորդում է ներկայացվել և ինչ ընթացքում են դրանք այս պահին:

-Այո, Լիլիթ Մարտիրոսյանի ԱԺ ելույթից հետո միանշանակ հարկ կար մտահոգվելու նրա ֆիզիկական և հոգեբանական առողջության և անվտանգության համար և հենց այդ պատճառով Լիլիթ Մարտիրոսյանը ոստիկանություն հաղորդում ներկայցրեց սպառնալիքների կապակցությամբ: Ոստիկանությունը մերժեց քրեական գործ հարուցել, նշելով, որ սպառնալիքներն իրական բնույթ չեն կրել, այլ արտահայտել են այդ մարդկանց ազատ կարծիքն ու վրդովմունքը: Ներկայումս մեր կողմից դատարանում վիճարկվում է ոստիկանության կողմից քրեական գործ հարուցելու մերժելու որոշումը:
Նույն քրեական գործի շրջանակներում, երբ սուպերմարկետի առաքիչը հանրայնացրել էր Լիլիթ Մարտիրոսյանի բնակության հասցեն, քննչական մարմինն ու ոստիկանությունը որոշեցին, որ դա բաց տեղեկատվություն է, որը հեշտությամբ կարող է հասանելի լինել ցանկացած քաղաքացու, ով կայցելի elections.am կայքը և կորոնի Լիլիթ Մարտիրոսյանի հասցեն, սակայն նշված կայքում տեղադրված է Լիլիթ Մարտիրոսյանի հաշվառման հասցեն, իսկ փաստացի բնակության հասցեի մասին ոչ մի տեղեկություն չի տեղադրվել ոչ մի տեղ, ինչը նշանակում է, որ այն չէր կարող դիտարկվել որպես՝ հանրամատչելի տեղեկատվություն:

Կա մեկ այլ գործ, որը գտնվում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում, այն վիրավորանք հասցնելու վերաբերյալ է, երբ կրկին ԱԺ ելույթից հետո Լիլիթ Մարտիրոսյանի վերաբերյալ irates.am կայքը նրան անվան էլ էր «այլասերված», այդ հիմքով քաղաքացիական գործ է հարուցվել հրապարակային ներողություն խնդրելու և փոխհատուցում կատարելու պահանջով:

Պարոն Մարգարյան, իսկ ի՞նչ խոչընդոտների եք բախվել և բախվում ՏՐԱՆՍ ԼԳԲ անձանց առնչվող գործերի շրջանակներում:

— Հիմնական խոչընդոտները ծագում են ոստիկանությունում և քննչական մարմինների հետ, երբ վերջիններս հրաժարվում են գործին ընթացք տալ, կամ ձգձգում են այդ գործընթացը անգամ բավարար ապացույցների և ակնհայտ հանցակազմի առկայության դեպքում, միայն տուժողի ենթադրյալ ԼԳԲՏ լինելու փաստը հաշվի առնելով:

Իսկ դատարանի հետ որևէ խոչընդոտներ առաջացե՞լ են նմանօրինակ գործերի դատավարության ընթացքում:

— Ոչ: Դատարանում սովորաբար գործը հայտնվելուց հետո իր բնականոն հունով շարժվում է առաջ, հիմնական խոչընդոտները ծագում են ոստիկանության և քննչական մարմնի հետ հետաքննության և նախաքննության փուլում:

Ինչպես կարող ենք եզրակացնել փաստաբանի հետ զրույցից՝ չնայած նրան, որ Հայաստանում մի շարք հասարակական կազմակերպություններ և պետական կառույցներ պայքարում են հանուն Հայաստանում ժողովրդավար հասարակության և համընդհանուր հավասարության, այնուամենայնիվ պատկան մարմիններն ու ուժային կառույցները բավական քաղաքական կամք չեն ցուցաբերում ԼԳԲՏ անձանց առնչվող հարցերին ու խնդիրներին տալ պատշաճ լուծումներ և հետևել ժողովրդավարության գաղափարախոսությանը:

Տրանսգենդեր տղամարդու դատավարության նոր մանրամասները

Կ.Ա.-ն, ով հանդիսանում է տրանսգենդեր տղամարդ, դիմել էր ՔԿԱԳ մարմին անձնագրային սեռը արականից իգական փոխելու նպատակով:
ՔԿԱԳ մարմինը ներկա օրենսդրության պայմաններում հարկադրում է անձին դիմելու սեռափոխության վիրահատության, որի պարագայում միայն հնարավոր է համարում սեռի փոփոխության գրանցումը, ինչը չի բխում ՀՀ սահմանադրության 3-րդ հոդվածից, ըստ որի մարդը բարձրագույն արժեք է:
Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: Այն նաև հարկադրում է անձին դիմելու անդառնալի վիրահատական միջամտության, ինչը նույնպես արգելված է ՀՀ օրենսդրությամբ և արձանագրված է Եվրոպական դատարանի մի շարք վճիռներով: Ինչպես նաև ՀՀ սահմանադրության 85-րդ հոդվածի համաձայն՝ Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք: “Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է, որ Մարդու համաձայնությունը բժշկական միջամտության համար անհրաժեշտ պայման է, բացի սույն օրենքով նախատեսված դեպքերից: Այսինքն, տվյալ դեպքում, անձին բժշկական միջամտության հարկադրելը՝քաղաքացիական կացության ակտում ուղղում կատարելու համար, միջամտություն էմարդու անձնական կյանքին, նրա ֆիզիկական և հոգևոր անվտանգությանը ևանձեռնմխելիությանը:

Նման պայմաններում, մեր կողմից ներկայացվել է հայց վարչական դատարանում, ընդդեմ ՀՀ ԱՆ ՔԿԱԳ մարմնի, բարենպաստ վարչական ակտ ընդունել պարտավորեցնելու պահանջով, այն է՝ կատարել սեռի փոփոխության գրանցում առանց սեռափոխության վիրահատության բժշկական փաստաթուղթ ներկայացնելու:

Առաջին դատական նիստը նշանակված էր 2019 թ. հոկտեմբերին, սակայն այն հետաձգվել է, քանի որ դատարանը պահանջել է որպես ապացույց ներկայացնել հայցադիմումում նշված Եվրոպական դատարանի վճիռը հայերեն լեզվով:

Ռազմավարական դատավարություն

RIGHT SIDE

HUMAN RIGHTS DEFENDER NGO

Strategic litigation

Տրանսգենդեր կանանց դատավարության մանրամասները

2018թ.-ի սեպտեմբերին «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան Հասարակական կազմակերպություն էին դիմել մի խումբ տրանսգենդեր կանայք, ովքեր ունեին իրավաբանական աջակցության կարիք: Տրանսգենդեր կանանց արգելել էին հաճախել սպորտային ակումբ, նրանց ծաղրել և ստորացրել էին իրենց գենդերային ինքնության և գենդերային արտահայտման հիմքով: ԻԿՀԿ իրավաբանն իր աջակցությունն էր ցուցաբերել և օգնել նրանց դիմել դատարան խտրականության հիմքով իրավունքների խախտումը ճանաչելու պահանջով:Այսպիսով հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ սպորտային ակումբի, Մ.Ս.-ի, Ն.Ա.-ի և Մ.Ե.-ի իրավունքների խախտումները և խտրական վերաբերմունքը ճանաչելու պահանջով:Առաջին նիստը նշանակված էր սույն թվականի հոկտեմբերի 1-ին, սակայն պատասխանողի ծանուցված չլինելու պատճառով նիստը հետաձգվել էր և նոր նիստ է նշանակվել սույն թվականի հոկտեմբերի 18-ին:

Լիլիթ Մարտիրոսյանը պահանջում է հրապարակային ներողություն

2019թ.-ի ապրիլի 5-ին պատմության մեջ առաջին անգամ ՀՀ խորհրդարանի ամբիոնից ելույթ ունեցավ տրանսգենդեր կին:

Սա նախադեպային էր Հայաստանի պատմության մեջ և իհարկե չէր կարող մնալ անարձագանք:

Հանրության արձագանքը խիստ տարբեր էր և լայնամասշտաբ: Դրանց մեջ նաև տեղ գտան շատ վիրավորական մեկնաբանություններ ու հայտարարություններ տրանսգենդեր կին Լիլիթ Մարտիրոսյանի հասցեին, ով հանդիսանում է «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության հիմնադիր նախագահը, իրավապաշտպան է և Հայաստանի պատմության մեջ առաջին Տրանս կինն, ով ունեցավ բավական համարձակություն զբաղվելու իրավապաշտպան գործունեությամբ, բարձրացնելով տրանսգենդեր անձանց խնդիրները:

Խորհրդարանում ունեցած ելույթից հետո Լիլիթ Մարտիրոսյանի հասցեին հնչեցին հազարավոր վիրավորական հայտարարություններ, նրան սպառնացին խոշտանգել և սպանել, պարզեցին և հրապարակեցին նրա անձնական տվյալները և տան հասցեն, հետապնդեցին և բազմաթիվ այլ հանցավոր գործունեություն ծավալեցին նրա ու ԻԿՀԿ այլ աշխատակիցների նկատմամբ՝ ատելության և խտրականության հիմքով:
Նմանօրինակ մի դեպք էր irates.am կայքում տեղ գտած մի հրապարակում, որտեղ Լիլիթ Մարտիրոսյանին անվանել էին «այլասերված», այս անգամ Լիլիթ Մարտիրոսյանը որոշեց անպատասխան չթողնել այս քայլն ու 2019թ.-ի մայիսին դիմեց դատարան վիրավորանքի համար հրապարակային ներողություն խնդրելու և փոխհատուցում տրամադրելու պահանջով:

Դատարանը որոշեց ապացուցման բեռը բաշխել կողմերի միջև: Այսպիսով կողմերն ունեն մինչև սույն թվականի նոյեմբերի 1-ը ժամանակ բավարար ապացույցներ ներկայացնելու համար. նիստը նշանակված է սույն թվականի նոյեմբերի 5-ին:

Իրավախախտումների վերաբերյալ հանրային հաղորդում ՀՀ գլխավոր դատախազությանը

Սույն թվականի հոկտեմբերի 14-ին, ժամը 15:57-ին Aysor.am կայքում հրապարակված՝ «Կուբայից ժամանած 14 տրանսգենդերները ՁԻԱՀ վարակակիր են, պնդում է Մալյանը. Ի՞նչ է ասում Միգրացիոն ծառայությունը» հոդվածից տեղեկանում ենք, որ «ՎԵՏՕ» շարժման նախաձեռնող Նարեկ Մալյանը վստահեցնում է՝ Հայաստանում գտնվող տրանսգենդերների մասին իր ինֆորմացիան պաշտոնական է: Նարեկ Մալյանը Facebook-ի իր էջում գրել էր, որ «Կուբայից ժամանած թվով 14 հատ տրանսգենդերները ՁԻԱՀ վարակակիրներ են: Սա պաշտոնական աղբյուրներից ստացված տեղեկություն է, կարող եք տարածել: Ընդհանուր առմամբ 16 հատ են, որից 14-ը ՁԻԱՀ վարակակիր: Ընդ որում նրանցից մեկը աշխատում էր հացի փռում»:

Պարոն Մալյանի սոցիալական կայքէջի ուսումնասիրության արդյունքում «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն եզրահանգեց, որ վերջինիս կողմից արված արտահայտությունները ՀՀ քրեական օրենսգրքի մի քանի հոդվածներով պարունակում են հանցակազմ, մասնավորապես՝

պնդելով, որ ստացված տեղեկությունները պաշտոնական աղբյուրներից են, կարելի է եզրակացնել, որ եթե Կուբայից ժամանած թվով 14 տրանսգենդեր անձինք ՄԻԱՎ վարակակիրներ են, ապա նշյալ տեղեկատվությունը ձեռք է բերվել կա՛մ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձանց միջոցով, կա՛մ ապօրինի այլ ճանապարհով:

ՀՀ քրեական օրենսգրքի 145-րդ հոդվածի համաձայն՝ առանց մասնագիտական կամ ծառայողական անհրաժեշտության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձանց կողմից անձի հիվանդության կամ բժշկական ստուգման արդյունքների մասին տեղեկություններ հրապարակելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:
ՀՀ քրեական օրենսգրքի 144-րդ հոդվածի համաձայն՝ մարդու անձնական կամ ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկություններն առանց նրա համաձայնության օգտագործելը կամ հրապարակային ելույթներով, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով կամ լրատվության միջոցներով այդպիսի տեղեկություններ տարածելը կամ հավաքելը կամ պահելը, եթե դրանք նախատեսված չեն օրենքով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:
Պարոն Մալյանը, առարկայացնելով ապաստան հայցող տրանսգենդեր անձանց, նրանց մասին խոսելիս օգտոգործել է «հատ» բառը, ինչի կապակցությամբ կարելի է եզրակացնել, որ պարոն Մալյանը նվաստացուցիչ մոտեցում ունի մարդկանց որոշակի խմբերի նկատմամբ՝ պայմանավորված նրանց սեռով, ազգային կամ էթնիկ ծագմամբ, ենթադրյալ գենդերային ինքնությամբ, ենթադրյալ ՄԻԱՎ կարգավիճակով, կամ ենթադրյալ սեքս աշխատող լինելուց կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

Նկատի ունենալով ՀՀ քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածը՝

1) Ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն, ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողությունները պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից չորս տարի ժամկետով:
2) Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են հրապարակայնորեն կամ լրատվության միջոցներ օգտագործելով, պատժվում են ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

Ընդունելով, ՀՀ Սահմանադրության հոդված 3-ը՝

1)Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է:Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:
2) Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

Նկատի ունենալով ՀՀ քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածը՝

1) Ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն, ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողությունները պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից չորս տարի ժամկետով:
2) Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են հրապարակայնորեն կամ լրատվության միջոցներ օգտագործելով, պատժվում են ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

Ընդունելով, ՀՀ Սահմանադրության հոդված 3-ը՝

1)Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է:Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:
2) Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

Ելնելով ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածով սահմանված քրեական գործ հարուցելու առիթներից՝

1) հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին.
2) հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները.

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն, ներկայացնելով վերոնշյալ փաստերը, հանցագործության մասին հանրային հաղորդում է ներկայացնում ՀՀ գլխավոր դատախազին՝ խնդրելով ստուգել Նարեկ Մալյանի հրապարկումը՝ ենթադրյալ հանցակազմերի կապակցությամբ:
Հաղորդման կրկնօրինակն «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն ուղարկում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ՝ վերահսկելու սույն հաղորդման հիման վրա քրեական գործ հարուցելու գործընթացի անաչառությունը, օրինականությունը, անկողմնակալությունը և բացառելու հնարավոր խտրականությունն ապաստան հայցող տրանսգենդեր անձնանց նկատմամբ:

Օգոստոսից- Հոկտեմբեր ամսիներին «Իրավունքի Կողմ» Իրավապաշտպան ՀԿ-ն ունեցել է 258 շահառու

70 համայնքային միջոցառման մասնակից

195 գրասենյակ այցելած շահառու

12 ՄԻԱՎ-ի կանխարգելման փաթեթներ ստացած շահառու

18 արտագնա հանդիպման մասնակից

11 ՄԻԱՎ-ի ուղղեգրում ստացած շահառու

15 իրավաբանական խորհրդատվություն ստացած շահառու

RIGHT SIDE

HUMAN RIGHTS DEFENDER NGO

+374 11 880 770

rightsidengo@gmail.com

www.rightsidengo.com

twitter - @RightSideNgo

Instagram - Right Side Ngo

SUPPORTERS, FRIENDS, DONORS

EUROPEAN ENDOWMENT FOR DEMOCRACY

HEINRICH BÖLL STIFTUNG SOUTH CAUCASUS

TGEU Transgender Europe

ECOM

Alliance for Public Health

FRONT LINE DEFENDERS

PLANETROMEO FOUNDATION

URGENT ACTION FUND FOR WOMEN'S HUMAN RIGHTS

ViiV Healthcare

Federal Republic of Germany Foreign Office

ILGA EUROPE

EKHN ENDING AIDS, TB AND HEPATITIS IN EURASIA

GIVE A DAMN CIRCLE

Investing in our future The Global Fund To Fight AIDS, Tuberculosis and Malaria

iglyo

OPEN SOCIETY FOUNDATIONS

cere Centrul de Resurse pentru participare publică